

մեզի՝ բայց եթէ կամ հրացանը մեր անձին վրայ դարձնել և կամ շուտով փախչիլ աներեկոյթ ըլլալ ամօթէ ու բանտէ ազատելու համար: Տես, ինչպիսի ցաւալի վիճակի մէջ կը տառապինք. քեզի դիտցածդ միայն յիշեցուցի՝ որ եթէ հօրս առջին ելլաս՝ աներկիւղ պատասխանես: Եթէ բանը յաջողի, կ'ընդունիս անտարակոյս՝ ինչ որ մեր առատաձեռնութենէն կը յուսաս:

Նոյն միջոցը վարժապետին աչքին դիմացը եկան բոլոր իր անոնց սուլած չար օրինակները և ուսուցած անվայել սկզբունքները և իբրև դատապարտուած մահապարտ մը ըսաւ.

— Ահ, պատկառելի տէր, իրաւցընէ ամեն բանի մէջ ձեր հպատակ ծառայն եղեր եմ, բայց այս բանս ձեր զայրացած հօրը առջև յարմարեցնելու համար ուրիշ քան զիս զօրաւոր անձ մը պէտք է, այս իմ ընելու բանս չէ. դու շատ լաւ գիտես հօրդ սովորութիւնը՝ որ երբ սաստիկ բարկանալով կրակ դառնայ, նոյն միջոցը չիթողուր դիմացինին բերան բանալ. ես ինչ կրնամ ընել՝ երբ նա ոտքերը գետին զարնելով ուժգին գոչմամբ վրաս բրդի. դնենք թէ հարկ ըլլայ որ ես ալ նոյնպէս ընելու ստիպուիմ, սակայն ես անոր ուժը ու թոքը չունիմ. նաև հայրդ ինծմէ չիպատկառիր մէկէն զիս սենեկէն դուրս հանելու ու երկրին սահմանէն վարելու: Ինչպէս առաջ ըսի, տէր իմ, այդ ամենածանր իրը՝ ի գործ դնելու համար ես շատ անյարմար եմ, և ըստ կարծեացս լաւագոյն կ'ըլլայ՝ եթէ դու անձամբ ելլաս ուղղակի հօրդ դիմացը և խնդիրը ներկայացընես՝ ինչպէս թէ քեզի ապագայ ժառանգութեանդ մասէն կը պահանջես զայն:

— Դու շատ խորամանկ ես, Գլայն, բայց տակաւին զիս չես կրնար խաբել. ես շագանակը կրակէն հանեմ և դու պանդոկին մէջ նստած ինծի սպասես. — այդ բանը բնաւ մի յուսար, վասն զի այն ծանր պարտքը՝ որ մեր կռնըկին վրայ հեծած է՝ առաւելապէս քու արդիւնքդ է. դու կ'առաջնորդէիր մեզի զքօսանքէ, զրօսանք, և կ'երակրեղինաց

համեղաճաշակը ընտրելուն մէջ իբրև քաջ վարպետ՝ միշտ նոյն տեսակ համեմներ պատրաստել կու տայիր. որոնց կը պարպուէր մեր քսակին կէսը, յօդս կը ցնդէին հինգ ֆրանգնոց դալեռներ ու թղթադրամներ. յետոյ դրամնիս պակասած զմեզ նեղութեմէ մէջ տեսնալով՝ ճարպկութեամբ կ'երթայիր տոկոսեօք փոխ կ'առնուիր վաշխասէր Հրէիցմէ: Ասոնց համար զքեզ նախ հօրս դիմացը կը հանեմ, թէ և բնաւ օգուտ մը չիտեսնուի, որ ինքը քու բերնէդ իմանայ մեր այս թշուառ վիճակը: Ես հօն մեր պարտիցին մէջ կը պահուրտիմ և անկից հօրս բնակած սենեկին պատուհանը կը դիտեմ. երբ անօգուտ ըլլայ քու աղերսդ, այն ատեն պատուհանէն թաշկինակովդ ինծի նշան ըրէ, որպէս զի ես ալ ընելիքս գիտնամ: Պատերազմը քեզմով պիտի սկըսի, եթէ դու չիկարենաս՝ ինծմով պիտի աւարտի: Ահա այս է իմ հաստատուն որոշմունքս. բայց եթէ յանկարծ պաշտօնդ լաւ չիկարենաս՝ ի գործ դնել, նոյն միջոցը բոլոր բարկութիւնս վրադ պիտի թափեմ:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՂԵՇԱՍՍԱՆԵՐՈՐԴ

Շնչերակային և երակային արիւն .

(Տես Էրես 237)

Մազատեսակ շնչերակայ ծայրն է, ըսինք, որ կը կատարուի գործարանաց սնուցման անըմբռնելի հրաշալիքը: Այդ բանը կատարելէն ետեւ, արիւնը հարկ է որ իր ելած տեղը նորէն դառնայ դայ, և հօն դարձեալ սկիզբ կ'առնուն այն պղտի հրաշալիքները, որոնց վրայ արդէն խօսեցանք: Անմիջապէս մազատեսակ շնչերակներէն ետքը՝ մազատե-

սակ երակները կու գան, որ միւսներուն պէս նուրբ և անտեսանելի են: Ամեն տեղէն արիւնը կը ժողովեն, առանց ա նոր վայրկեան մը դադար տալու, և ահա այսպէս արիւնը դարձեալ սիրտը կը դառնայ:

Ուսկից կը սկսին մեր երակները, ուր կը լմննան մեր շնչերակները: Ոչ ոք ճշդիւ կարող է զուրցելու, որովհետեւ երկուքներուն ալ վերջի ճիւղիկները ան տեսանելի են մարդու աչքին, որչափ ալ օգնութիւն գտնէ այն գործիքէն՝ որ իր հանճարին զիւտն է: Եւ սակայն թէ պէտ և ոչ ոք կրցեր է այդ բանը տեսնել, բան մը կայ որ ես քեզի կրնամ զուրցել. մեր պզտի երակները նուրբ շնչերակներնու շարունակութիւնն են, և մի և նոյն խողովակն է որ երկնալով շնչերակէ երակ կը փոխուի, առանց ընդհատելու, որուն կողից մէջէն կ'անցնին մեր գործարանաց որոշուած գոյացութիւնները, ինչպէս քրտինքը մեր մորթին մէջէն կ'անցնի երբ արտաշնչութեան մէջ ենք:

— Բայց, պիտոր ըսես, եթէ ոչ ոք կարող եղեր է տեսնելու, ինչպէս կարելի է այդ բանը գիտնալ:

Աղէկ հասկընանք մէկզմէկ: Մարդու վրայ, ինչպէս նաև այն կենդանեաց վրայ որ իրեն աւելի կը մօտենան, ոչ երբէք տեսնուած է այս բանը. սակայն ուրիշներու վրայ կարելի եղած է տեսնելու: Պզտի մեկնութե մը կարօտութիւն ունի ասիկայ, և ինծի յանցանք չսեպես մեկնելու, վասն զի իր օգուտն ունի:

Երբ ձեռքդ վզիդ վրայ կը հանգչեցնես, ինչ կը զգաս: Զերմութիւն: Երբ պզտի կատու մը, պզտի թռչուն մը կը բռնես, ինչ կը զգաս: Զերմութիւն: Ըսէ ուրեմն ինծի, ուսկից կու գայ այդ ջերմութիւնը: Որպէս զի շատ չուշանաւք ես ինքս պատասխանեմ: Այդ ջերմութիւնը անոնց և քու արիւնէդ առաջ կու գայ, որ տաք է, և հիմա տեսնեմք պիտի թէ ինչո՞ւ: Չես երևակայեր բոլոր այն հետաքրքրական բաները որ այդ պզտի խօսքիս մէջ կը բովանդակին:

Արիւնդ տաք է. սակայն ինքնիրեն չէ տաքցած, աղէկ հասկըցիր այդ բանը:

Հիմա թէ որ դորտ մը, մողէզ մը, ձուկ մը դպչիս, ինչ կը զգաս: Պաղ: Ինչո՞ւ համար: Ատոր պատասխանն ալ աւելի դժուարութիւն մը չունի:

Այդ անոր համար է՝ որ արիւննին պաղ կ'երևայ:

Ստոյգ որ այդ այդպէս է՝ և ատոր վրայ այս ալ կրնաս աւելցնել, որ եթէ արիւննին պաղ է, անոր համար է որ քու կիներդ պէս չէ տաքցուած: Մի անհամբեր ըլլար, այդ ամենը ըստ ժամանակին և տեղւոյն տեսանալ պիտի:

Արդ այն կենդանեաց վրայ որոնց արիւնը պաղ է, օձք, գորտք, կրիայք, մողէզք, ձրկունք և այլ տեսակք, արիւնը՝ ինչպէս 'ի մեզ' անանկ կը շրջի, և նաև մերինին նման մեքենայով մը: Սակայն կրնաս աղէկ ըմբռնել որ ջերմացուցիչ մեքենայ մը շատ աւելի կատարեալ չէ՞ք մը պէտք է ունենայ քան զայն՝ որ չիջերմացներ, և յիշաւի, շողքորթութիւն մը չկարծես, քեզնէ մինչև դորտ մը տարբերութիւն շատ կայ, անանկ չէ. և բնական բան է որ դորտին մարմինը աւելի կոշտ կերպ չէ՞ք մը ունենայ քան թէ քուկդ:

Այս՝ աղքատաց կերպարանք ունի որ հարստից ճոխ բնակարաններէ զուրկ են. և ճոխերն ու աղքատները մէկ դի դնել ուղեւորով, որոնք ամենը միօրինակ մարդիկ են, ա՛յո այն պաճուճապատանքներէն մէկ մը, որ կը քալեն, թեւերնին կը շարժեն, ու, հայր, մայր կը կանչեն. ու բաղդատէ զան 25 փող աժող խանութի մը պաճուճապատանքին: Երկուքն ալ ըստ ամբողջութեան մի և նոյն կերպով շինուած են. երկուքն ալ երկերկու թև ունին, երկերկու սրունք, մէյ մէկ բերան, մէյմէկ քիթ, երկերկու աչք, և այլն, և այլն. սակայն մանրամասն դիտելով սրչափ տարբերութիւններ կան. սրչափ աւելի խնամքով շինուած է առջինը քան զերկրորդը:

Այսպէս ուրեմն պաղ արիւնով կենդանիք 25 փողոյ խանութէն են: Իրենք ալ մեզի պէս շնչերակ ու երակ ունին,

այլ այնչափ խնամքով շինուած չեն, և անոնց ծայրից հրաշալի նրբութիւնը որ մարդուս և կենդանեաց վրայ քննուելով՝ դիտողին յուսահատութիւնը կը բերեն, այս ստորնագոյն կարգի կենդանեաց վրայ դժուարութիւն մը չեն ազդեր: Իր աչաց տեսութիւնը բաւական չէ յիրաւի անոնց նրբութիւնը ըմբռնելու, սակայն մանրադիտին միջոցաւ ամեն բան կրնայ տեսնալ, թէ շնչերակաց ծայրերն և թէ երակաց. և այս կենդանեաց վրայ կարող եղեր են տեսնելու այն որ քիչ մը առաջ քեզի կը զուրցէի. այսինքն, ինչպէս շնչերակին ծայրը յերակ կը փոխուի առանց ընդհատելու: Նոյն այս ձկանց ու գորտանց վրայ եղած քննութիւններն են որ Հարվէյին արեան շրջանին վրայ հռչակած դադարեալները արդարացուցին, զորոնք այնչափ ծաղրըրած էին անոր ժամանակակից դիտունները: Իրաւ է որ այն ատեն ինքը Նարվէյ մեռած էր, և այդ բանը ստէպ կը հանդիպի. այլ անոր շատ ցաւակից չըլլանք: Այն մէկն որ նշանաւոր բաղդն ունեցեր է ձեռքը ճամարտութեան մը վրայ դնելու և զայն աշխարհքիս վրայ նետելու, այն մէկը բաւականապէս վարձքն առած է կանխաւ: Եթէ ասով մարդկանց հաւանութեան շողմարար աղմուկն ալ կը պահանջէ, և յաջողութիւն համար տղայական խաղալիկը կը փնտռէ, ըսել է որ տղայ մըն է, և անարժան է այն պաշտաման զոր Աստուած ընծայեր է իրեն:

Տղայ մը: Սիրելի դու, քեզի շատ չարամիտ երևնամ պիտի, և ինծի 'ի պատիժ յիշեցընես պիտի որ ըստ գէշ սովորութեանս դարձեալ առաջարկութեանէս շատ հեռացեր եմ:

Ատոր համար մի յանդիմաներ զիս. ահա առաջարկութեանս կը դառնամ:

Ի՞նչպէս կը զանազանի, հարցընես պիտոր ինծի, շնչերակ մը երակէն, որ անով որոշուի շնչերակին մասը երակին մասէն:

Շատով: Նախ շնչերակ մը, ինչպէս որ քեզի ետքերս կը զուրցէի, երեք պատեաններէ կը բաղկանայ, որոնց գլխա-

ւորը, որ է մէջտեղինը, դիմացկուն և առաձգական է. այս մէջտեղի պատեանը ոչ միայն շնչերակին արիւնը մղելու կարողութիւն կու տայ, այլ և միանգամայն անոր հատումը շատ վտանգաւոր կ'ընէ. վասն զի ասանկ առթի մէջ այն պզտի խողովակը մէջ տեղի պատեանին պատճառաւ բոլորովին բաց կը մնայ, և արիւնը անվերջանալի կերպով դուրս կը վազէ: Այս պատեանը երակները չունին, որով կտրուելով անոնց կողմունքները իրենք իրենց վրայ կը ճնշուին, և անով շատ դիւրին է արեան հոսումը դադրեցընել:

Ասկէ զատ, երակները միջոցէ միջոց՝ դռնակներ ունին, նման անոնց որ սրտին բլթակաց և փորոքներուն մտից առջին տեսանք: Կը յիշես այն հռչակաւոր դռնակները, որոնց վրայ կը կայանայ բոլոր մեքենականութիւն, որոնք թոյլ կու տան արեան մէկ կողմէն անցնելու, այլ չեն ներեր անոր որ անցած ճամբէն նորէն ետ դառնայ. երակաց պզտի դռնակները, որոնք նաև կափարիչք կ'ըսուին, մի և նոյն պաշտօնը կը կատարեն: Դէպ 'ի սրտին կողմը կը բացուին որ արեան անցք տան, այլ երբ ան ուզէ ետ դառնալ կը դոցուին, անանկ որ քանի հետզհետէ կը քալէ և առաջ կ'երթայ, ալ ետ դառնալու յոյս չիմնար, և կամաց կամաց սիրտը կը հասնի՝ առանց կարող ըլլալու անկէ փախչիլ: Սակայն շնչերակաց վրայ ասոր նման բան մը չենք տեսնար, այլ արիւնը՝ սրտէն ընդունած մղմամբը մէկ թափով մը կը քալէ:

Վերջապէս, էականն այս է. երակաց մէջ գտնուած արիւնը նոյն չէ ինչ որ է սրտին մէջինը:

Մի և նոյն չէ, տէր Աստուած: Ուրեմն մեր մարմնոյն մէջ երկու արիւն ունինք:

Անտարակոյս, օրիորդիկ, և ատիկայ կարելի չէր որ մտքէդ անցներ. վասն զի երբ կը հանդիպի որ խայթուիս, կամ ձեռքդ կտրես, և կամ քթէդ արիւն դայ, միշտ մի և նոյն արիւնն է որ կը տեսնես. այն կարմրագոյն արիւնը որ

ամենուն ծանօթ է: Եւ այս անկէ առաջ կու գայ որ արիւնը՝ թէ նուրբ չընչ-երակներէն և թէ նուրբ երակներէն ելլելով մէկ մէկու կը խառնուի և կ'ըլլայ այն կարմիր արիւնը որ կը տեսնես: Սոյնպիսի տեսակ խառնուրդն է դարձեալ որ ամէն վէրքէ կը վազէ, մեծ եղեր է վէրքը կամ պղտիկ, և ասոր պատճառաւ է որ մարդիկ համաձայն կ'ըսեն թէ արիւնը կարմիր է, որ ըստ ինքեան անանկ չէ, ոչ երակաց արեանը նկատմամբ և ոչ շնչերակաց: Առջինը սև է, ինչպէս կրնաս ստուգել, թէ որ սիրտընելով դիտես մէկու մը վրայ՝ որմէ երակահատութեամբ արիւն հանեն:

Այդպիսի առթի մէջ միշտ երակ մըն է որ կը բանան. և շնչերակաց վրայ ըսածներէս դիւրաւ կրնաս պատճառը իմանալ: Կը տեսնես այն ատեն որ խայթուածքէն սև կարմիր գոյնով ցայտուածք մը կը նետուի, որ շատ աւելի սև է քան թէ կարմիր. այս է երակային արիւնը: Բայց երբ դիպուածով շնչերակ մը կտրուի, մէջէն ելածը բոլորովին տարբեր է, վարդագոյն արիւն մըն է այն, փրփրալից, գրեթէ նման կաթի՝ որուն մէջ կարմիր գոյն հալեցուցած և դաւաղանիկներով զարկած ըլլան. և ասոր ահա շնչերակային արիւն կ'ըսեն:

Չկայ աւելի դիւրին բան, ինչպէս կը տեսնես, քան շնչերակ մը երակէն որոշել. շատ է մէջի բովանդակածը դիտել: Երբ արիւնը մեր գործարանաց մէջ կը հասնի որ զանոնք սնուցանէ, շնչերակային է. երբ զանոնք սնուցանելէն ետև՝ կ'ելլէ մէջերէն կ'երթայ, երակային փոխուած կ'ըլլայ: Ի՞նչ ընելու կ'երթայ արդեօք սրտին մէջ, դէպ ուր ճամբայ կ'ելլէ: Նոր մղում մը գտնելու կ'երթայ որ զինքը թոքերը ձգէ, ուր տեղ նորէն շնչերակային կը փոխուի. որ ըսել է գործարանները նորէն սնուցանելու կարող կ'ըլլայ: Այս բանիս մէջն է շրջագայութեան բոլոր գաղտնիքը և պատճառը:

Այդ բանը շուտով կը զուրցուի, սիրելի օրիորդիկ, այլ ես զրաւադիր կ'ըլ-

լամ որ դու բան մը չես հասկընար ատկէ: Մի ամընար ատոր համար: Կարելի չէ ատկէ բան մը հասկընալ քանի որ չենք սորված թէ Շնչառութիւնը ինչ է, և այս պատճառաւ հարկ է այս արգելքին առջին տեղիք տանք:

Ուրեմն յաջորդ անգամուն կը թողունք ձեռք զարնել սննդառութեան այս երրորդ մասին. և եթէ առջի երկուքը քեզ զբօսեցուցեր են, կը յուսամ որ այս երրորդը քեզ չձանձրացնէ:

Կը շարունակուի:

ԶԳԻՆԻՒՆ ՀԵ՛ՆՑ ԽՄԵՑԻՔ ՈՐ ԶԱՌԻԻԾՆ ՍՊԱՆՆԵՔ

Թագաւոր մի հրաման արար նախաներացն¹, թէ ամեն նախա՛ն օր մի զիմ որդին՝ ի պատիւ տարէք: Եւ տանէին: Եւ մէկ օր մէկ նախա՛ն ի տունն տաւ, և յերիկունն եբեր ի դուռն ի ներս երաց², և գնաց: Եւ որդի թագաւորին խիստ գինով էր. և ի բազի³ ելաւ, և գինին ի վրան շրջեցաւ. և անկաւ ի ցւիցքն⁴ ի վայր և մեռաւ. և մէկալ օրն գտին մեռեալ: Եւ թագաւորն հուքմ⁵ արար, թէ ի յիմ իշխանութիւնս՝ ինչ որ այգի կայ՝ զամեն քաղեցէք, և զկարասնին կոտորեցէք. — և արարին այնպէս. — զի կորստեան որդւոյ իմոյ եղև (պատճառ): Եւ այրի կին մի մէկ որդի ունէր. զիւր հնձանն փլուց, և զգինին պահեց. և յամենայն վաղընէ և յերիկունն՝ ի վերայ հացին մէկ երկու թաս կու խմէր որդին: Եւ գիշեր մի ի դուրս ելաւ, և զթագաւորի դառիւծն սպանեց: Եւ թագաւորն վաղիւն կանչեցոյց, թէ Զիմ առիւծն՝ ով որ սպաններ է՝ թող գայ որ խալաթեմ⁶, երեկ⁷ այրի կինն և որդին. հարցաւ

1 Իշխան, պաշտօնեայ:

2 Ըրաւ:

3 Խաղալու, պարելու:

4 Տանիք, երգիք:

5 Հրաման:

6 Խիւլիւլեմ, պատուոյ զգեստ հագցնել:

7 Եկաւ: